



ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ



աղաչափությունը Հայկական ֆիլոլոգիայի մեջ երևում է առաջին անգամ Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանության միջոցով: Այս, իհարկե, չի նշանակում, թե տաղաչափությունը գոյություն չի ունեցել հայոց մեջ մինչև այդ քերականության թարգմանությունը: Հայ ժողովրդի մեջ տաղաչափությունը գոյություն է ունեցել մինչև տաղաչափության նյութ դառնալը ֆիլոլոգիայի և առհասարակ գրական ուսումնասիրության համար: Տաղաչափությունը կապված է խոսքի չափականության և երաժշտականության հետ. երգը և խոսքը, երաժշտությունը և բանաստեղծությունը սկզբնական շրջանում միացած են եղել իրար հետ. երգիչը միաժամանակ ասել, պատմել է երգելով և նվագելով: Երգը հորինել է ժողովուրդը հանպատրաստից և նրա միջոցով արտահայտել զանազան տրամադրություններ: Երգը պարունակել է որոշ չափ, ութմ, իսկ հայտնի է, որ ութմը իր ծագումով աշխատանքային երևույթի հետ է կապված և առաջին անգամ արտահայտվել է աշխատանքային պրոցեսի մեջ: Երգ-խոսքը ոտանավորի զարգացման պատմական էտապներից մեկն է հանդիսանում, իսկ ոտանավորի էական, բաղկացուցիչ տարրը, նրա հիմնական, որոշիչ հատկանիշը ութմն է կազմում: Ժամանակի ընթացքում երգը, երաժշտությունը բաժանվում է բանաստեղծությունից և լուրարանչուրը զարգանում որպես արվեստի ուրույն ճյուղ: Այս երևույթն գոյություն է ունեցել թե՛ հույների, թե՛ հալերի և թե՛ ուրիշ ժողովուրդների մեջ: Առաջին անգամ ոտանավորի կազմության և նրա վառուցման օրինաչափության խնդիրը հելլենիստական ֆիլոլոգների գիտական քննության առարկան է

հանդիսացել, թեև ուղ տաղաչափության (մետրիկայի) մասին նրանցից առաջ Արիստոտելեսն է ակնարկում իր «Պոետիկա»-ի մեջ:

Դիոնիսիոս Թրակացու քերականության մեջ մետրիկան կազմում է «Յաղագս առոգանութեան» (պերի պրոսոդիոն) գլխի 3-րդ մասը, որ կրում է «Յաղագս ոտից» խորագիրը: Ադոնցը գրում է¹, որ «Յաղագս առոգանութեան» մասի վերջին գլուխները, այն է՝ «Յաղագս արուեստի» և «Յաղագս ոտից», շին պատկանում Դիոնիսիոս Թրակացու գրչին, այլ հավելվածներ են՝ կցված Դիոնիսիոսին: Ադոնցը գտնում է, որ այդ հավելվածներն էլ հունական աղբյուրից են փխում և Փիլոնի «Ալլաբանոքյունենր»-ի մեջ նմանապես հանդիպում ենք առոգանության տերմինների: Այս հանգամանքը, իհարկե, բնավ չի նսեմացնում հայ թարգմանչի գործի նշանակությունը: Մեզ հետաքրքրում է ներկա դեպքում այն, որ տաղաչափական արվեստը (գրավորը) հայ մշակույթի մեջ անցել է առաջին անգամ հելլենիստական կոլտուրայի միջոցով, բայց զարգացել Հայաստանում ինքնուրույն ուղիով:

Հունական քնագիրը տալիս է հունական բանաստեղծությունը հատուկ բառական ոտքերի հորջորդումները համաձայն վանկերի: Ոտքերն ըստ վանկերի բաժանվում են երկու խմբի՝ երկավանկ և եռավանկ: Այս երկուսն իրենց հերթին ունեն իրենց համապատասխան չափական տեսակները: Երկավանկ ոտքը ունի չորս անուն՝ համբուլը (սպոնդեոս), մեծասար (պիրրիսիոս), մեծավերջ (տրոբայոս), անգայտ (յամբոս): Եռավանկ ոտքը ունի ութ անուն: Դրանք են՝ ստեղն (գակտիոս), վերջատանջ (անապայրսոս), քողա-

1. Н. А. Д о н у —, Дионисий Фракийский...“, էջ CLXXX.

բորբ (ամֆիմալրոս), բողաղոտ (ամֆիբրաբոս), հաւեղ (բակֆեոս), ալարտեղ (պոլիմբակֆեոս), ներզևն (խորեոս), սոնֆ (մոլոսոսոս)։

Քրակացու քերականության մեկնիչներից միայն Մովսես Քերթովն է, որ իր մեկնության մեջ քննարկել է տաղաչափության հունական այս օրինաչափությունը և մեկնաբանել ու աշխատել է հայերեն օրինակներով հասկանալի դարձնել հայ ընթերցողին։ Դավիթը, ինչպես երևում է նրա մեկնության ԻԴ դիվից («Յաղագս ոտից»), զբաղվել է նաև տաղաչափության հարցի մեկնությամբ, բայց ամբողջությամբ չի հասել մեզ այդ մասը. մեզ հասել է միայն այն հատվածը, որի մեջ Դավիթը բացատրում է, թե ինչո՞ւ կոչվում է ոտը։ Ըստ Դավթի, մարդու և կենդանու մարմնի գոյության համար ոտքը շատ կարևոր է, որովհետև մարմինը հաստատված է ոտների վրա. եթե կենդանին կամ մարդը ունենա ոտներ, բայց զուրկ լինի որևէ այլ օրգանից, օրինակ՝ աչքից կամ ձեռքից, նա դարձյալ որևէ վերայ կկարողանա գոյամիջոց հայթայթել, իսկ եթե զուրկ լինի ոտներից, նա չի կարող այդ անել։ Որպիսի կարևորություն ունեն ոտները մարմնի համար, նույնպիսի վարևորություն ունի բանաստեղծության մեջ և ոտքը ռոտանավորի համար.

«Ոտք յայն սակա ասին, զի որպէս կենդանի մարմնի ի վերայ ոտից հաստատութեան կեալ— յալլոց մասանցն իբր թէ յաչաց կամ ի ձեռաց ունիցի ոք կիսամասն, զիարդ և իցէ զհարկաւոր կեանան հայթայթէ, բայց ատանց սոցա ոչ ևս—սոյնպէս և քերդութեանս գործ ի սա հաստատեալ ունի զկատարելութիւն»։

Համանման մեկնություն տալիս է ոտք բառին նաև Մովսես Քերթովը, որ գրում է հետևյալը.

«Ոտք վասն այնորիկ ասին, զի որպէս կենդանի մարմնի ի վերայ ոտից հաստատուն կայ և թոչունք ի վերայ թևոց և զոք ամենայն ի վերայ միջնողանն»։

Գրիգոր Մագիստրոսը քերականության մեկնության մեջ նույնպես զբաղվում է տաղաչափության հարցով։ Նա համեմատում է հունական և արաբական տաղաչափությունը և շեշտում, որ տաղաչափության օրինաչափությունը, որպես ներդաշնակության արտահայտության մի ուրույն ձև, իր մեջ պարունակում է մթթեմատիկական տարրեր։ Այս օրինաչափությունը, ինչպես տեսնում ենք, Գրիգոր Մագիստրոսի մեկնաբանության մեջ պլուրալ գործիքն ընտելթ է կրում և բխում է ամբողջապես պլուրալ գործիքի փիրսոսիա-

լությունից թվերի, որպես առհասարակ ներդաշնակության հիմքի, ուսմունքից։ Գրիգոր Մագիստրոսը գրում է իր թղթերից մեկի մեջ հետևյալը.

«Այլ տաղ է հոմերական քաջ ոլորեալ (հյուսած։ Ա. Ա.) և սա տաղ դիւցազնական շափաքերեալ ըստ ելլենացոցն. իսկ ըստ եբրայեցոցն կշտեալ և բաղկացեալ է եռատանեայ և երից քառից միոյ քուէի և շարամանեալ ամանակօք երկարացեալ քսան և չորից, ամբողջ բերելով անդուստ և դոտքն պարզք երկոտասան. քանզի ոչնք (կարողություն։ Ա. Ա.) քաջաց է և բերէ քաջուորակս այս զկնի բազմամանակացն ասարեալ մեծավերութեամբ, վեց անկեամբք յանկաւորեալ քառիք ձայնաւորք՝ ոչիւ, հիւնիւ, ալբիւ, եչիւ. իսկ երկու քաղածայնիք՝ թոյիւ, նոյիւ, և յօղաւորեալ է նոյիւ և քաղխեցեալ թոյիւ, քաղառութեամբ եչիւ, ալբիւ և վարատմամբ ոչիւ, հիւնիւ, միոյ երկամանեակաւ և միոյ սղիւ և երկուց ձայնորդաց։ Իսկ շարակայացեալն եթէ քերթողապէս ոք նկատեցէ, ի քառից տասանց շափաքերեալ գոցի. բայց ոչ է ինձ սակաւ ինչ ներտրամախոհութիւն (մտածություն) սակա բաղադանութեան (հարմար) որ ի սա մակացութիւն։ Քանզի ի թուականութեանէ և յերաժշտականութեանէ և յերկրաչափութեանէ և յաստեղաբաշխութեանէ շարաբարձեալ լինքեան ունի»։

Սուբբյանը հոգիվածի մեջ Մագիստրոսի այս բնութիւնները լուսաբանելով հանդում է այն եզրակացություն, որ ոտանավորների հանգավորությունը հայկական տաղաչափության մեջ մտել է արաբացիներից։ Սուբբյանի այս մտքի հետ չի կարելի համաձայնել, որովհետև զուրկ է գիտական հիմնավորումից։ Սուբբյանը Մագիստրոսի այն ոտանավորի կապակցությունները, որի առթիվ Մագիստրոսը շարադրել է իր մտքերը տաղաչափության մասին, գրում է հետևյալը իր հոդվածի էջ 29—30-ում» 3.

«Ինչպէս վերը ըսինք, մեր հինքն ու նախնիքն յանոչ չեն գիտեր, ինչպէս յոյնն ու լատինն. բայց լետ ժամանակաց, ինչպէս կը վկայեն Մագիստրոս և Երզնկացին, յարարացոց սորվեցան մերքն միակ վերջատրութեամբ հազարտողան ոտանաւորներ շարագրել, այն ձանձրալի

2. Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 33, թուղթ Բ., հրատ. Կ. Կոստանյանի, Աղեքսանդրապոլ, 1910.
 3. Հ. Ա. Սուբբյան, «Հոմերական բազմիք և հոմերական տոգք», «Բազմավէպ», հատոր 15, Վենետիկ, 1877:

բեմն հույն և հայ միասին ապրում էին: ... Բնականորեն այսպիսի դեպքում այն նոր երգերը, որ հույները երգում էին, հայերն ևս նոր երգեր պիտի հորինէին նմանելով հունաց երգերին»⁸: Հունական եկեղեցական երգերի բովանդակությունը նույնպես կազմել են սաղմոսները՝ աստվածաշունչ գրքից: Այդ երգերը կազմվել են ավելի վաղ, քան Հայաստանում: Հունական եկեղեցին ուներ բավականաչափ զարգացած հոգևոր գրականություն. հայերը շատ բան թարգմանում են հունարենից կամ ստեղծագործում հունականի նմանությամբ: Հունական կրոնական երգերն անպայման ազդեցություն են ունեցել հայկական կրոնական բանաստեղծության և երաժշտության վրա. այդ ազդեցությունն ավելի ուժեղ և ցայտուն պիտի լիներ գրերի գյուտից առաջ, երբ հայոց եկեղեցիներում ժամերգությունը լինում էր հունական լեզվով: Մ. Աբեղյանի ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ ազդեցության հետքերը, ինչպես՝ սաղմոս, մեսեդի, ստողոգի, մեղեդի, կանոն, տաղ, բրոնք եկեղեցական երաժշտական արտահայտություններ են: Հայկական եկեղեցական երգերի (շարականների) տաղաչափությունն էլ էսպես նույնն է, ինչ որ հունական եկեղեցական երգերի տաղաչափությունը, գրում է Մ. Աբեղյանը⁹: Հունական ազդեցությունը հայկականի վրա այնքան տևական էր, որքան խզված էին հայերի և հույների բարեկամական-բաղաբական հարաբերությունները¹⁰:

Մինչև 8-րդ դարը (մեր էրայի) հույների և հայերի մեջ յուրաքանչյուր եկեղեցական երգիչ կարող էր երգ հորինել և երգել եկեղեցում՝ հույս ունենալով, որ իր երգը հետագայում ընդունելություն կգտնի և կերգվի եկեղեցում: Այդ երգերը հորինվում էին, անշուշտ, կապակցված նաև տոների հետ¹¹: 8-րդ դարում հունական եկեղեցական երգեցողության մեջ նորամուծություն է առաջանում: Այս նորությունն այն է, որ աշխատում են, որպեսզի ամեն տոնական օր ունենա իրեն հատուկ

երգը և այդ երգը մշտապես ու անփոփոխ երգվի միայն տարվա մեջ մի անգամ, այն է՝ այդ օրը. այդ երգը լինում էր ոչ թե մի, այլ մի քանի հատ, մի շարք երգեր¹²: Հունական եկեղեցական բանաստեղծության մեջ դա կոչվում է կանոն: Կանոնների հեղինակը համարվում է Կրետացի Անդրեասը (650—720 թ. թ.): Ի՞նչ են ներկայացնում այս կանոնները: Դրանց մասին Կրումբախերը գրում է. «Կանոնները կազմվում են 8 կամ 9 տարբեր երգերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն կազմությունը և բաղադրվել է սկզբնապես ավելի, իսկ հետագայում մեծ մասամբ 3 կամ 4 տնից: Երգերի ինչպիսի թիվը համապատասխան է հին կտակարանի 9 երգերին, որ քրիստոնյաները երգում էին սովորաբար հնագույն ժամանակներից ի վեր»¹³: Մ. Աբեղյանը ցույց է տալիս, որ հունական այս կանոնները մեքենական կառուցվածքը մուտք է գործում հայկական եկեղեցական բանաստեղծության մեջ: Հունական այս կանոնները հայկական եկեղեցական երգերի մեջ մուտք են գործել ոչ վաղ, քան 8-րդ դարը: Ենթադրվում է, որ հունական ժամերգության կանոնները հայկական եկեղեցում մեջ ներդրել է Ստեփանոս Սյունեցին, որովհետև նա երկար ժամանակ ապրել է հույների մեջ և քաջ ծանոթացել նրանց եկեղեցական կանոններին ու բանաստեղծությանը: Ստեփանոս Սյունեցին ապրել է 8-րդ դարի երկրորդ կեսին և հենց այս ժամանակաշրջանն է համարվում կանոնների հայոց եկեղեցում մեջ մուտք գործելու ժամանակը: Բյուզանդական շրջանի եկեղեցական երգերի բովանդակությունը կազմել են օրհներգություններ և ներբողներ՝ նվիրված Մարիամին, Քրիստոսին, Աստծուն և եկեղեցական զանազան գործիչների: Չորրորդ դարից այդ երգերը մուտք են գործում Հայաստան, սակայն հունական լեզվով և երգվում են եկեղեցիներում նույնպես հունական լեզվով: Կարլ Կրումբախերը գրում է, որ թե՛ արևելյան և թե՛ հյուսիսային ժողովուրդները ենթարկվել են հունական (իմա՝ հելլենիստական) ազդեցության¹⁴: Հունական եկեղեցական բանաստեղծությունը և երաժշտությունը մեծ չափով տարածվել է հայոց և այլ ժողովուրդների մեջ¹⁵: Անժխտելի է հունական եկեղեցական բանաստեղծության մուտք գործելը հայ և մյուս ժողովուրդների մեջ. այդ բանաստեղծությունն ապրել է այնքան, որ-

8. Մ. Աբեղյան, «Ուրուագծեր հայոց գրականության պատմության մասին» (տե՛ս «Արարատ», 1912 թ., հուլիս-օգոստոս, էջ 720—732);
 9. Մ. Աբեղյան, նույն, էջ 723—724;
 10. Հայկական եկեղեցական երգերը և կրոնական բանաստեղծությունը, որպես հայ հոգևորականության ստեղծագործություն, ենթարկվել են հայ աշխարհիկ բանաստեղծության և երաժշտության ազդեցությանը թե՛ գրերի գյուտից առաջ և թե՛ հետո: Ազդեցության հարցում անընդունելի է Մ. Աբեղյանի տեսակետը:
 11. Մ. Աբեղյան, նույն, էջ 823 («Արարատ», 1912 թ., սեպտեմբեր):

12. Մ. Աբեղյան, նույն, էջ 823;
 13. Krumbacher, Geschichte der Byzantinischen Litteratur, էջ 695—696. München, 1897.
 14. Նույնը, էջ 683;
 15. Նույն գիրքը, նույն էջը:

քան հայ գրեթե զոյովթյուն շունեին Հայաստանում և, ինչպիսի ցույց տվինք վերը, հայերի քաղաքական և տնտեսական համագործակցությունն ընթանում էր հաշտ ուղիով: Բայց հետագայում, գրեթե գլուտից հետո, հայ և հունական քաղաքական հարաբերությունների ներհակուծկյան կապակցությամբ, հայկական եկեղեցական բանաստեղծությունը կանգնում է ինքնուրույն ոտքի վրա և զարթնում իր սեփական հողի վրա, ինքնուրույն թե՛ բովանդակությամբ և թե՛ ձևով. այդ ինքնուրույն ստեղծագործական շրջանը սկիզբ է առել 5-րդ դարից և իր զարգացման ծայր աստիճանին հասել հանձին Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու:

Տարակույս չկա, որ հայ և թե վրացի կամ ուրա ժողովուրդների մեջ եկեղեցական գրականությունը, մասնավորապես բանաստեղծությունը սկզբնական շրջանում կարող էր կրել հունական եկեղեցական բանաստեղծությունից ազդեցությունը. բայց անտարակուսելի է և բացահայտ ճշմարտություն, որ ժողովրդական բանաստեղծությունը դեռ հույների մեջ գոյություն է ունեցել, ավելի վաղապես ժամանակաշրջանում, ավելի առաջ, բան բյուզանդական քրիստոնեական բանաստեղծությունը: Անգիր բանաստեղծությունն ընդգրկել է հունական աշխատավոր ժողովրդի կյանքը, նրա աշխատանքը, նրա ուրախությունն ու վիշտը, պայքարը, հաղթանակը և այլն: Անգիր բանաստեղծության կողքին ծաղկել է գրավոր քնարական ստեղծագործությունը, որի փայլուն արտահայտությունը գտնում ենք հունական հուշակալովոր քնարերգուների՝ Սապֆոյի, Ալքայոսի, Անակրեոնի, Արիստիտոսի, Պինդարոսի և ուրիշների աշխարհիկ երգերի մեջ: Անտիկ աշխարհի կլասիկ շրջանի այս երգիչների վավաթ, կենսախիսնդ երգերի մոտ նսեմանում է բյուզանդական ողջ գրական ստեղծագործությունը, որ գերազանցապես եկեղեցական է: Նույնը պետք է ասել այդ շրջանի հայկական քնարական ստեղծագործության մասին: Հայկական աշխարհիկ քնարական ստեղծագործությունը, բուն ժողովրդական ստեղծագործությունը գրի չի առնվել, չի պահպանվել, որովհետև այն արհամարհվել, անարժեք ու «ամբողջախիսն» է համարվել: Հայ ժողովրդի աշխարհիկ երգերը և բովանդակ ստեղծագործությունը բացահայտ անտեղադրության են մատնվել ո՛չ միայն 5-րդ դարում Սահակի, Մեսրոպի և նրա աշակերտների կողմից, այլև հաջորդ դարերում, երկար ժամանակ: Այդ երգերի փշրանքները, որ գտնում ենք Խորենացու պատմության մեջ, մեզ գաղափար են տալիս հայ ժողո-

վրդի ստեղծագործական մեծ հանճարի և հայ ժողովրդի երգերի աշխարհիկ բնույթի մասին: Հայ ժողովրդական անգիր բանաստեղծությունը շարունակվել է մնալ ու պահպանվել ժողովրդի մեջ, հարստանալ նորանոր ստեղծագործություններով՝ թե՛ գրեթե գլուտի ժամանակ և թե՛ գրեթե գլուտից հետո, երբ Հայաստանը հեղեղվել էր կրոնական-եկեղեցական գրականությունը՝ թե՛ թարգմանական և թե՛ ինքնուրույն ստեղծագործական:

Եկեղեցական քնարական ստեղծագործությունների կողքին թարգմանվում են հատկապես հունական կլասիկ գրողների ստեղծագործություններից՝ Հոմերոսից, Հեսիոդոսից, Թեոգնիդեսից, Պինդարոսից: Այս ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների փշրանքները վկայում են, որ քրիստոնեական եկեղեցական բանաստեղծությունը չի գոհացրել, մասնաճեղքներին և հունական կլասիկների քնարական ստեղծագործությունները Հայաստանում ունեցել են ընթերցող մասսա: Այս հարցի կապակցությամբ հետաքրքրական է նշել «Գիրք Սահմանաց»-ում գետեղված թարգմանությունը Թեոգնիդեսի բանաստեղծությունից.

«Պարտ է յաղքատութենէ փախչիլ և ի մեծակի տեղի անկանիլ ծովն և ի վիմաց, ո՛վ կիտնէ, հոսիլ արեգակնակոխ»¹⁶: Դավիթ Անհաղթը հունական այդ բանաստեղծից մեջբերումը մեկնաբանում է այսպես. «Եվ արդ՝ պարտ է գիտել, եթե ոչ զայն ասէ, եթե պարտ է տնանկիչ զինքն ի բաց դառնալ, այլ զայն ասէ, թէ պարտ է տնանկիչ ամենայն ուրեք սերմանել, և ի վիհս անկոխս, թէ հնար ինչ իցէ և ի ծովում»¹⁷:

Թեոգնիդես բանաստեղծի այս տողերը թարգմանված են նաև «Գիրք պիտոյից»-ի մեջ այսպես. «Պարտ է յաղքատութենէ փախչիլ և ի մեծն անկանել ծով, և կամ ի վիմաց հոսիլ ի բարձանց»: «Գիրք պիտոյից»-ի մեջ այս տողերի հեղինակը համարվում է Բիաս բանաստեղծը:

Նույն «Գիրք Սահմանաց»-ում գտնում ենք հունական պոեզիայի մի այլ նմուշ, որ թարգմանաբար գետեղել է իր գրքում Դավիթը.

«Արդ՝ եկիր ո՛վ կիւզիարդէ, յիմ ճենճերայիր տամարս. Երկրայս գոմ զի՞նչ զքեզ առ ասացից՝ աստուած եթէ՛ մարդ. Բայց սակայն աստուած տոսացից զքեզ, ո՛վ կիւզիարդէ»¹⁸:

16. Գիրք Սահմանաց Դավթի Անյաղթ փիլիսոփայի, պրակե Բ., էջ 96—97.
 17. Գիրք Սահմանաց, նույն էջը.
 18. Գիրք Սահմանաց, էջ 51:

Հունական կլասիկների նմուշները մուտք են գործել հայ գրականության մեջ Փիլոն Երբայցու, Նոննոսի գրվածքների թարգմանությունների միջոցով: Արապես, Փիլոն Երբայցու գրքի մեջ հիշված են Հոմերոսը, Հեսիոդոսը, Էսքիլեսը, Եվրիպիդեսը և Պինդարոսը: Պինդարոսից թարգմանված է հետևյալը.

«Ճառագայթ արեգական համբավ բազմադէտ մի՛ տար զքեզ թող մարմնային աշաց, աստղ գերիվերազույն տուրնջեան կոչեցեալ, զոր եղի թազաւոր զօրութիւն դայնր զոր և իմաստութեան հանապարհի խաւար անգէտ եղեալ յարել իմն մանկագորն քան յառաջն: Այլ զքեզ Արամազդայ ձի աստուած աղաչեմ անվնաս ի բարեխառնութիւն իմն յեղմունք զոր երգեցից, ո՛վ պանծալի պարկեշտ ամենահասարակ արուեստ»:

Հելլենիստական՝ աշխարհիկ պոեզիայի լավագույն արտահայտությունը հայ գրականության մեջ պետք է համարել պարսից վեպի՝ «Աղեքսանդր Մակեդոնացու պատմությունը» («Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացու») աշխատության հայերեն թարգմանությունը կրոնական գրականության առընթեր, Հայաստանում: Այս աշխատությունը վերագրվում է Կալլիսթենեսին, որ ապրել է 365—328 թվերին մեր թվակ. առաջ: Թե ե՞րբ է թարգմանվել պոետական այս աշխատությունը կամ ո՞վ է նրա թարգմանիչը, մինչև հիմա պարզված չէ: «Մատենադարան հայկական թարգմանութեանց»-ը վերագրում է Մովսես Խորենացուն¹⁹, սակայն վերջնականորեն անպայման չէ այդ:

Ա. Սուքրյանը²⁰ «Հոմերական բառգիրք և հոմերական տողք» վերնագրի տակ ներկայացնում է այն հատվածները, որոնք Հոմերոսի կամ ուրիշ պոետների քերթվածներից թարգմանաբար մուտք են գործել հայկական հնագույն շրջանի մշակույթի մեջ՝ սկսած Դիոնիսիոս Թրակացու քերականությունից: Կալլիսթենեսին վերագրված այս վեպը Սուքրյանը համարում է ավագագույն թարգմանությունը հայկական պոեզիայի մեջ, որ թարգմանվել է նույնիսկ ավելի վաղ, քան Դիոնիսիոս Թրակացու քերականությունը: Սուքրյանը գրում է, որ հայկական այս հնա-

գույն թարգմանությունը ենթարկվել է փոփոխության հաշատուր Կեչառեցու փոփոխ, ԺԳ դարում. «Բայց մեզ ցավալին այն է, որ չես սքանչելի թարգմանչին, այլք, մահաւանդ հաշատուր Կեչառեցի մը, որ ապրած է ԺԳ դարու վերջերը ու ԺԴ-ին սկիզբը, յանդրգներ են մաքրել այն գիրքը ի հեթանոսական գրուցաց»²¹: Հայերեն թարգմանության մեջ Սուքրյանը հունարանություն և հելլենական տաղաչափության օրինակ է համարում այն հատվածը, որի մեջ նկարագրվում է, թե ինչպես Աղեքսանդր Մակեդոնացին, հասնելով հունական Թերե քաղաքը, կամենում է ավերել Կադմյան դուռը. այդ ժամանակ քաղաքի Իսմենիա բանաստեղծը խոնարհվում է աշխարհակալի առաջ ու նվազելով պիտություն է հայցում և աղերսում չափերը Պինդարոսի հայերենիքը:

«Թագաւոր և զարմ աստուածոց, շքեղ և գեղեցիկ Աղեքսանդրէ, այժմ փորձիւ ուսայց գրո հանդիտապատի»²² աստուածզօրութիւնդ. և պատուեմք՝ այստեհետև իրրև զաստուածաք բարբար..... Յանգէտս լինիս, Աղեքսանդրէ, զի Թերայցի ես դու և ոչ Պելլացի. բոլոր զքեզ Թերայցեոց աշխարհս աղաչէ..... Մի՛ առնիր անապատ գրեզ սերմանողս աստուածս քոյոց ծննդապետանցն. մի՛ քակտել կործաներ զքաղաքս քո զեսպհական զուառ»²³:

Սուքրյանը համեմատելով հայկական թարգմանությունը հունական բնագրի հետ, այս կտորը համարում է գերազանց թե՛ ըստ գրության և թե՛ ըստ հնութեան, մանավանդ, որ այս հատվածը հունական տաղաչափությամբ է գրված: Սուքրյանը գեղեցիկ հայկական տաղաչափության մի նմուշ է համարում Հոմերոսի Ոդիսականից մի տողը այդ գրքի մեջ, որ սկսվում է այսպես.

«Զբազուս մարդկան ետես, զքաղաքսն, և զմիտս ծանեալ»: (Πάλλωυ δονυθϷωπυν εδεν ἄστρϷα Ϸι νοου ερυω²⁴):

Խորենացուն ծանոթ է եղել Կալլիսթենեսին վերագրած այս վեպը, որ հայ պատմագիրն օգտագործել է անանց հիշելու վեպի հեղինակի անունը: Այսպես՝ Աղեքսանդրի պատմության մեջ կարդում ենք.

«Եւ էր դէմ յանդիման տեսանել զլապիթեայցն և զուշկապարկանց կոիւս, և ի վերայ Պերիթեայ հարսանեացն

19. «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», էջ 713—714, Վենետիկ, 1889:
20. «Բագմավէպ», հատոր ԴԵ, Վենետիկ, 1877:

21. «Բագմավէպ», նույն, էջ 16:
22. Հանգիտապատի՛ հալաօար պատմով:
23. «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացու», էջ 66—67, Վենետիկ, 1842:

եղեպսն. քանզի ոմանք ի նոցանէ ընդ դահոյանովքն մտանէին, և ոմանք՝ սեղանօք իբրու զինուք պարէին, և այլք ի խաւարին տեղիս զիմեայ անկանէին: Եւ անդ էր տեսանել նոր ոմն Ողիսևս և զՊեննելովայ սեղեխանս զի սատակելով կլանէր արտաքս»²⁴:

Խորհնացին այս հատվածն օգտագործում է Տրդատ իշխանի և Սյունյաց Բակուր նահապետի միջև խնջույքի ժամանակ տեղի ունեցած միջադեպի նկարագրության մեջ. այս միջադեպի առիթը հանդիսացել էր զեղեցիկուհի Նազինիկը: Խորհնացին վերը բերած մեջբերումը հետ ու առջ է դնում հարմարեցնելով իր նպատակին այսպես.

«Եւ անդ էր տեսանել նոր զոմն Ողիսևս՝ զՊեննելովայ զսեղեխան սատակելով, և կամ զղապիթեայցն զլուշկապարկացն կռիւս ի վերայ Պերիթեայ հարանանաց»²⁵:

«Գիրք պիտոյից»-ի, Աղեքսանդր Մակեդոնացու պատմության և հունական կլասիկների՝ Հոմերոսի, էսքիլեսի, Նվրիպիդեսի ստեղծագործությունների հատվածների թարգմանությունները վկայում են, որ աշխարհիկ գրականությունը ժամանակի արդիական պահանջների ծնունդը լինելով, բոլորովին անտեսված չի եղել և կրոնական գրականության առևթիբը զարգացել է Հայաստանում, թեկուզ աննշան չափով, թե՛ թարգմանական և թե՛ ինքնուրույն ստեղծագործական հողի վրա:

Հունական քերթողական չափերի տերմինոլոգիան դարձել է հայկական լիրիկ բանաստեղծության սեփականությունը շնորհիվ միայն Դավթի՝ Թրակացու քերականության տաղանդավոր թարգմանչի: Հելլենիստական գրական այս կուլտուրան արնուհետև մնում է որպես մի ավանդ և անցնում սերնդե սերունդ հայկական ֆիլոլոգիային: Այս, իհարկե, չի նշանակում, թե մետրիկան, որպես այդպիսին, որպես մի նորուրթ է մտել հայկական գրական կուլտուրայի մեջ: Հայ ժողովուրդը, ինչպես վերը նշեցինք, ունեցել է իր սեփական, ինքնուրույն ստեղծագործությունը, իր զգացումների, խոհերի, մտորումների արտահայտությունը զեղարվեստորեն, իր լիրիկան: Այդ ինքնաբերական, ժողովրդական ստեղծագործությունը ունեցել է իր մետրիկան, որը բուն հայկական, անխառն ժողովրդական լիրիկային: Է հատուկ եղել: Հենց հայկական այս տաղաչափությունն է, որ հրկար ժամանակների ընթաց-

քում զարգացել է ուրույն գծով, ուրույն ուղիով, որովհետև հայկական ժողովրդական բանաստեղծությունը, որի հետ անխաղիչորեն կապակցված է տաղաչափությունը, ընթացել է իր սեփական զարգացման նույնպիսի ինքնուրույն, հայ ժողովրդի ոգուն ու տրամադրությունը հատուկ ուղիով:

Հայկական հին վիպական երգերի փրշրանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք սարգոտոյա խառն ոտանավորներ են²⁶: Ժողովրդական այս չափը կիրառել են հայ բանաստեղծները և առաջին անգամ Գրիգոր Նարեկացին²⁷: Հաջորդ դարերում հայ բանաստեղծները քնարական քերթության մեջ գործ են ածում ո՛չ միայն ժողովրդական լիրիկայի չափը²⁸, այլև այն չափերը, որոնք նշված են Թրակացու քերականության մեջ և դարձել են ոտահավերք գրելու արվեստ բոլոր քնարերգուների համար, բոլոր ազգերի մեջ: Հունական լիրիկական չափը հայկական բանաստեղծության մեջ, ինչպես գրում է Մ. Աբեղյանը, գործ է ածվել հայերենում ամենահին ժամանակներից ակասած: Այդ «լամբական»-ն է: Չափական լիրիկական ստեղծագործության առաջնությունը պատկանում է Գրիգոր Նարեկացուն, որը գրել է 16-ականի «լամբական» և այլ չափի ոտանավորներ: Նարեկացուց հետո նույն չափը գործածել են Գրիգոր Մազիստրոսը, Ներսես Շնորհալին²⁹,

իսկ հետագայում ոտանավոր գրելու հունական չափերը մուտք են գործում հայկական լիրիկայի՝ թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական քերթողական աշխատանքների մեջ: Ոտանավոր գրելու արվեստի խնդիրը գիտական ուսումնասիրության նյութ դարձրել են, ինչպես տեսանք, առաջին անգամ Դավիթը և Թրակացու քերականության հայ մեկնիչները: Նրանք իրենց ուսումնասիրության մեջ հետևել են Թրակացու հայ թարգմանչի ավանդներին և կենսագործել ու հայկական գրականությանը ժառանգություն թողել հունական լեզվից հայերենի փոխարքած պոետական արվեստի ու չափի տերմինոլոգիան: Հայկական տաղաչափությունը սեփականություն է դարձրել այդ տերմինները և սերնդե սերունդ ավանդ թողել հայկական ֆիլոլոգիային: Իր մեջ ընդունելով հելլենիստական գրական մշակույթի այդ ժառանգությունը՝ հայկական պոետիկան զարգացել է իր ուրույն, ինքնատիպ ուղիով, սակայն

24. Նույն, էջ 28.
 25. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գիրք Բ., գլ. ԿԳ, էջ 194, Թիֆլիս, 1913:

26. Մ. Աբեղյան, Տաղաչափություն, էջ 367—371:
 27. Մ. Աբեղյան, նույն, էջ 368:
 28. Մ. Աբեղյան, նույն, էջ 373—374:
 29. Մ. Աբեղյան, նույն, էջ 209:

երկու միանգամայն տարբեր՝ ժողովրդական-աշխարհիկ և եկեղեցական-կրոնական ուղղություններով: Եկեղեցական-կրոնական պոնեզիան իր կերտվածքի յուրահատուկ շահականությունը զարգանում է մինչև 13-րդ դարը, ապա կանգ առնում և հետզհետե դադարում ու մեռնում, որպես ժամանակի հասարակական զարգացմանն ու տրամադրություններին անհամապատասխան ու խորթ գրական մշակույթ, իսկ ժողովրդականը՝ աշխարհիկը շարունակում է անդադար մշակվել, նոր լիցք ստանալ հասարակական զարգացման, փոփոխությունների, գրական ճաշակի ու ժամանակի գեղարվեստական պահանջների համաձայն՝ արտահայտելով ժամանակի սոցիալական տրամադրությունները: Հայկական տաղաչափությունը ևս զարգացել է նույնպիսի ինքնուրույն ուղիով, ինչպես և հայկական պոնեզիան, որի հետ անխզելիորեն շղթապակած է հենց այդ տաղաչափությունը:

Հայկական տաղաչափության հարցով դբաղվել են Արսեն Բազրատունին և պրոֆ. Մանուկ Աբեղյանը: Հայկական տաղաչափությունը լուրջ գիտական ուսումնասիրության առարկա է դարձրել առաջին անգամ

պրոֆ. Մ. Աբեղյանը իր շատ արժեքավոր գիտական մի աշխատության մեջ, որ կոչվում է «Հայոց լեզվի տաղաչափություն»³⁰, Այդ աշխատության մեջ հայ գիտնականը բացառիկ խորազննությամբ, գիտնականին հատուկ անխոնջ տքնությամբ ուսումնասիրել է հայկական քերթողական արվեստի ողջ առանձնահատկությունները, ինչպես և այն, թե որպիսի՝ կիրառությամբ են արտահայտվել հեյլենիստական ֆիլոլոգիայի հայտնաբերած պոետական շափական օրենքները հայկական քերթողական ստեղծագործության մեջ: Գիտնական պրոֆեսորի հետազոտությունը ցույց է տալիս, որ հեյլենիստական տաղաչափության օրինաչափությունը առկա է հայկական քնարերգության մեջ՝ հնագույն ժամանակից սկսած մինչև մեր օրերը՝ թե՛ ժողովրդական երգերի, թե՛ եկեղեցական և թե՛ հին, միջնադարյան, նոր և նորագույն քնարական ստեղծագործությունների մեջ:

Պրոֆ. Մ. Աբեղյանի այս եզրահանգումների մասին մի այլ անգամ:

30. Այս աշխատությունը լույս է տեսել 1933 թվին, ՀՍԽՀ Լուսժողովատի հրատարակությամբ:

